

---

---

**ԼԵՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԵՐԻ ԱՂԱՊՏԱՑԻԱՅԻ  
ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈ**

**ԻՎՈՆԱ ԿԱԼԻՇԵՎՍԿԱ**

**(Վարչավա)**

Այս հոդվածի նպատակն է ներկայացնել 1990-2006 թվականներին Լեհաստան ներգաղթած հայերի՝ աղապտացիայի գործընթացում որդեգրած ռազմավարությունները: Եզրահանգումներն արված են տեղանքային հետազոտությունների հիման վրա, որոնք անցկացվել են 2004-2006 թթ. Վարչավալայի մշակութային մարդաբանության և ազգաբանության ֆակուլտետի մի խումբ ուսանողների կողմից Վարչավա, Լոմժա, Գիժիցկո և Բելաստոկ քաղաքներում<sup>1</sup>:

Նոր միջավայրին աղապտացվելուն մի քանի գործոն է ազդում՝ բնավորություն, հետաքրքրասիրություն, աշխարհընկալում, միջմշակութային միջավայրի կենսափոխ, ինչպես նաև գաղթածների տնտեսական հաջողությունները:

Լեհաստանում հասարակության որոշ մասը հայերին ընկալում է որպես հեշտ հարմարվող (հատկապես կենցաղային մակարդակում) հասարակական շերտ, որն ազատորեն ընդունում է մշակութային տարբերությունները, պատրաստակամ է համագործակցության ու նոր կապերի հաստատման: Մյուս մասը նրանց համարում է կոնֆլիկտային, կռիվների հակված, բայց և պատրաստ՝ միմյանց օգնելու:

Ի՞նչ ռազմավարություններ են օգնում նրանց՝ հարմարվելու լեհական հասարակության մեջ: Կյանքի ո՞ր բնագավառներին են դրանք վերաբերում:

Ես ցանկանում եմ ներկայացնել երեք գործոն, որոնք, ըստ իս, շատ կարևոր դեր են խաղում լեհ հասարակության մեջ հայերի հարմարվելու գործում.

1. Հայկական հին համայնքի աջակցությունը,
2. Լեհերի հետ ամուսնությունները (նաև ոչ պաշտոնական),
3. Առևտրական յուրահատուկ ռազմավարությունը (առևտրով զբաղվողների համար):

***Հայկական հին համայնքի օգնությունը***

Սկզբնական շրջանում Հայաստանից արտագաղթածների համար առաջին դժվարությունները հաղթահարելու գործում (փաստաթղթային խնդիրներ, լեհերենի և տեղական նորմերի չիմացություն) մեծ դեր է խաղացել հայկական հին համայնքը, որը գոյություն է ունեցել դեռևս միջին դարերից:

«Հին համայնք» ասելով հասկանում ենք հայերի՝ այսպես կոչված հին և նոր վերաբնակեցվածների ներկայացուցիչներին (այն հայերին, որոնք եկել են Լեհաստան դեռևս միջին դարերում, և նրանց, ովքեր Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո վերաբնակեցվել են Լեհաստանում): Հին համայնքի անդամների թիվը մոտ 5-15 հազար է:

---

<sup>1</sup> Այստեղ օգտագործված են ուսանողներ Ազնեշկա Մալենգելի, Կարոլինա Կոմոտայտիսի, Կշիշտոֆ Մարչուկի, Կարինա Վոնդոլովսկայի կատարած հետազոտությունների արդյունքները:

Նրանք, ովքեր եկել են Լեհաստան 90-ական թվականներից հետո, պատկանում են վերաբնակվողների երրորդ ալիքին<sup>2</sup>:

Երկու տարբեր աշխարհների՝ Հայաստանից եկած հայերի և հայկական ծագում ունեցող լեհերի, որոնք ցանկանում էին օգնել իրենց հայրենակիցներին, հանդիպումը հաճախ հիասթափություն էր առաջացնում:

Հին համայնքի ներկայացուցիչները, որոնք հիմնականում բարձրագույն կրթություն ունեցող մարդիկ են, հայերեն չգիտեն (հենց դրանով էլ նրանք տարբերվում են ուրիշ երկրներում ապրող իրենց հայրենակիցներից, որոնց մեծ մասը հրաշալի տիրապետում է հայերենին) և հաճախ իրենց անվանում են «լեհեր՝ հայկական ծագումով»: Նրանք նոր գաղթած հայերի աչքում «քիչ հայկական» են թվում: Եկածներն իրենց հերթին հին համայնքի հայերի կողմից համարվում էին «չափից ավելի հասարակ», որոնք չէին համապատասխանում հայի մասին իրենց պատկերացմանը: Մյուս կողմից՝ նոր եկածները հետաքրքրություն առաջացրին լեհահայերի շրջանում, նրանցից լեհահայերը իմացան ժամանակակից Հայաստանի փաստացի իրավիճակի և երկրի առջև ծառայած խնդիրների մասին: Դա օգնեց նրանց ավելի լավ հասկանալու գաղթի պատճառները:

Նախկին համայնքի անդամները նոր եկածներին փաստաթղթային հարցերում, ինչպես նաև աշխատանք գտնելու գործում և բիզնեսի բնագավառում:

«Որևէ հիմնարկություն գնալու համար որպես թարգմանիչ նրանք մեզ օգնեցին, առանց լեհերենի դժվար կլիներ ինչ-որ բան անել, նույնիսկ երեխային դպրոց տեղավորել», - հիշում են նորեկները:

Նրանք խոստովանում են նաև, որ հենց հին հայերից են սովորել լեհերեն առաջին բառերը, և դա հեշտացրել է լեհական հասարակության մեջ իրենց տեղը գտնելուն: «Շնորհակալություն», «խնդրեմ». նույնիսկ լեհերեն այսպիսի բառեր չգիտեինք, հաճախ նմանատիպ տարրական օգնություն էր մեզ հարկավոր: Մեզ թվում էր, թե այստեղ մենք կարող ենք ռուսերենով հաղորդակցվել»:

Հին համայնքի ներկայացուցիչները, եթե նույնիսկ անմիջականորեն չեն օգնել, ապա նրանց հանդեպ դրսևորել են բարյացակամ վերաբերմունք՝ գտնելով, որ հայերին պետք է օգնել իրավական դաշտում, գաղթականների իրավունքների և կրթության հարցերում: Հիմնականում նրանք գիտեին (կամ մոտիկից ծանոթանում էին) նոր գաղթածների՝ փաստաթղթերն օրինականացնելու դժվարությունների մասին:

Հին համայնքը նաև անհանգստացած էր 90-ական թվականներին եկածների ոչ այնքան դրական վարկով, որը կապված էր ռուսական մաֆիայի հանցագործությունների հետ<sup>3</sup>: Նրանք այսպես էին արտահայտվում այդ կապակցությամբ. «Նրանք մեր մասին լեհերի ունեցած վերաբերմունքը փչացնում են»:

Ոմանք անմիջական օգնություն էին ցուցաբերում, իսկ ուրիշները նրանց վերաբերվում էին այնպես, ինչպես Հայաստանով հետաքրքրվող լեհերը՝ մտածելով, որ կենտրոնը ինչ-որ որոշում կկայացնի, կամ ինչ-որ կազմակերպություններ կընդառաջեն նրանց:

<sup>2</sup> Տե՛ս **S. Մարճինիակ**, Երրորդ փուլ, երրորդ տեսանկյուն: Հայկական արտագաղթի նոր հարմարվողականությունը Լեհաստանում, «Լեհական համայնքի դիտարկում, XXV – 1998 թթ.», Կրակով, 1998, № 3(89), էջ 127:

<sup>3</sup> Նման դեպքեր արձանագրում են նաև Սոցիալական քաղաքականության զեկույցները և վերլուծական քննությունները՝ հետևյալ վերնագրով. «Լեհական հասարակության գնահատականը: Նոր գաղթածների հետ հարաբերությունները» (մանրամասն տե՛ս **Լուկաշ Լոտոցկի**, Գաղթի զեկույցների շարք, № 5/2005, էջ 17):

Նորեկները, ինչպես այժմ իրենք են հիշում, չէին կարող սպասել կառավարական որոշումների: «Օրինական թե անօրինական, մենք ուզում էինք միայն ոտքի կանգնել, կապեր հաստատել և գումար վաստակել...»<sup>4</sup>:

Ըստ մեր գրուցակիցների պատմածների՝ հին համայնքը մեծ մասի համար եղել է կապերի, ծանոթությունների հաստատման սկիզբ, թեթևացրել լեհական հասարակության մեջ մտնելու գործընթացը:

Ընդ որում, հին համայնքի հետ ավելի մոտիկ կապեր ունեցել են հատկապես 90-ական թվականներին եկածները: Ավելի ուշ եկածները հիմնականում իրենց հույսը դրել են համեմատաբար վաղ եկած իրենց հայրենակիցների վրա, որոնք նրանց մտցրել են լեհական հասարակության կյանքի «գաղտնիքների» մեջ:

Հին համայնքի հետ վերջիններիս կապը իրականանում էր հիմնականում մշակութային միջոցառումներին և հայկական եկեղեցու արարողություններին մասնակցելու կամ շուկայում առևտուր անելիս պատահական հանդիպումների միջոցով:

Ընդհանուր առմամբ, հին հայերի օգնությունը թեթևացրեց նրանց առաջին քայլերը, որոնք կարևոր էին ադապտացիայի գործընթացի սկզբի համար:

### ***Լեհ-հայկական ամուսնություններ***

Ադապտացիան հեշտացնող երկրորդ գործոնը ամուսնություններն են: Կովկասից եկած մյուս գաղթականների համեմատությամբ հայերը լեհերի, մասնավորապես լեհուհիների հետ ավելի շատ են ամուսնական կապեր հաստատել:

Հարկավոր է նշել նաև, որ «հայ-լեհուհի» ամուսնական տարբերակը զգալիորեն ավելի տարածված է, քան «հայուհի-լեհ» տարբերակը: Պատճառն այն է, որ գաղթողները հիմնականում եղել են արական սեռի ներկայացուցիչներ: Ջրուցակիցներիս մի մասի կանայք հայուհիներ էին, իսկ մնացած մասը դրական էր ընդունում իրենց կամ իրենց երեխաների՝ լեհուհու հետ ամուսնանալու գաղափարը: Մի քանիսը նշում էին, որ Հայաստանում ընտանիքները հիմնականում դեմ են խառը ամուսնություններին, բայց նման տարբերակներն ընդունելի են արտագաղթի ժամանակ: «Եթե ինչ-որ մեկը Հայաստանից եկել ու գտնվում է այստեղ կամ Չեխիայում, ապա նման ամուսնություններն ընդունելի են»<sup>5</sup>:

Մի քանիսը խոստովանեցին, որ ամուսնանալով լեհուհու հետ, փորձել են իրենց ավանդույթների տարրեր մտցնել ամուսնական կյանքի մեջ: Հետաքրքրվել են այն աղջկանով, որն իրենց դուր է եկել, տեղեկություններ հավաքել նրա վարքի մասին: Պատահել են նաև դեպքեր, երբ ծնողները միջնորդել են իրենց որդիների համար լեհ հարսնացու գտնելու գործում<sup>6</sup>: Սակայն նաև ժպիտով խոստովանեցին, որ այստեղ դա չի հաջողվում:

Հայերը հայտարարում են, որ իրենք ավելի հեշտությամբ են կապեր հաստատում լեհ կանանց հետ, քան, օրինակ, իրենց կողքին առևտուր անող լեհ տղամարդկանց հետ: Ուշագրավ է, որ այն լեհ կանայք, որոնք ծանոթ են հայերին, վերջիններիս համարում են գեղեցիկ և նրբաճաշակ, մինչդեռ այլ կարծիքի են հայերի հետ կողք կողքի առևտուր անող լեհ տղամարդիկ: Վերջիններիս ուղղված այն հարցին, թե կամուսնացնեին իրենց աղջիկներին հայերի հետ, հիմնականում պատասխանում էին, որ երբեք թույլ չեն տա նման տարբերակ: Իսկ նրանք, ովքեր դրական

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Արայիկ, հայ, մոտ 45 տարեկան, Վարշավա, առևտրական:

<sup>6</sup> Տե՛ս Կ. Կոմոտայտիս, Երկազգային լեհ-հայկական կապեր, էջ 11:

պատասխան էին տալիս, ելնում էին այն բանից, որ հայերը քրիստոնյաներ են: Անշուշտ, կային նաև շատերը, որոնք թեև երկար տարիներ միևնույն շուկայում աշխատել էին հայերի հետ, նույնիսկ չգիտեին, որ հայերը քրիստոնյա են, այլ նրանց կրոնը համարում էին իսլամը<sup>7</sup>:

Բացի արտամուսնական կապերից, որոնք հիմնականում կարճ են տևում, հայերը հաճախ նաև պաշտոնապես ամուսնանում են լեհերի հետ: Դրա շնորհիվ նրանք արագ տիրապետում են լեհերենին, սովորում լեհական հասարակության մեջ ընդունված նորմերը, որոնք հաճախ արմատապես տարբերվում են հայրենական նորմերից: Չնայած պարզվում է, որ հայ տղամարդիկ ավանդական հայկական ամուսնության մոդելը չեն բերում լեհական միջավայր՝ դրանք հարմարեցնելով հայկականին, սակայն դա բոլորովին չի նշանակում, թե հայերը չեն նկատում հայրենիքի և լեհուհիների միջև եղած տարբերությունները: «Դե լեհուհիները մի քիչ ուրիշ են...դե ոնց ասենք...հայուհիները ավելի համեստ են, դե լեհուհիները բոլորովին ուրիշ կերպ են ...: Օրինակ, լեհուհին ծխախոտ է ծխում, իսկ հայուհին չի ծխում: Օրինակ դա: Դա արդեն մեծ տարբերություն է»<sup>8</sup>: Մակայն գաղթի իրավիճակում դա ընդունելի է: «Դե դա ինձ այստեղ չի խանգարում. այդպես էլ կարելի է...»:

Այստեղ հաճախ են հայ տղամարդիկ տանը օգնում իրենց կանանց, զբաղվում զավակների խնամքով: Նրանք նվազ ուշադրություն են դարձնում աղջկա կուսության փաստին, կամ այն փաստին՝ ծխում է, թե ոչ: Նրանք նաև իրենց դուստրերին են ավելի շատ ազատություն տալիս, քան, ինչպես իրենք են ասում, կանեին դա Հայաստանում:

Խառը ամուսնությունները մեծ մասամբ համարվում են երկմշակութային: Ամուսինները պահպանում են երկու ազգերի ավանդույթներն էլ. ընդունում են և՛ հայկական, և՛ լեհական տոները, ծանոթներ ունեն երկու ազգի ներկայացուցիչների մեջ: Հաճախ լեհ ամուսինը կամ կինը սովորում է հայերենը, չնայած դրա անհրաժեշտությունը հաղորդակցման առումով բնավ էլ չկա, քանի որ հայերը բոլոր դեպքերում բավականին հեշտ են տիրապետում լեհերենին: Գաղթածը լեհական ընտանիքում հարմարվում է մշակութային սխեմաներին, որը նրան թույլ է տալիս իրեն անվտանգ զգալ այդ մշակույթում: Այն դառնում է դյուրին, սրտամոտ, նվազեցնում երկկողմանի անջրպետը:

Այն արտասահմանցիկ, որը ունի լեհ կին կամ ամուսին, ձեռք է բերում անվտանգության և պաշտպանվածության զգացում: Բացի դրանից, նա մտնում է լեհական ծանոթությունների շրջանակ: Լեհ ծանոթների առկայությունն ու նրանց հետ ժամանակ անցկացնելու հնարավորությունը նույնպես էական գործոն են նոր, ներդաշնակ ինքնազգացողության համար: Այդ գործընթացը շատ բնորոշ ներկայացրել է լեհերենի ուսուցչուհին, որը դասավանդում է Հայաստանում. «Հենց դա էլ համարվում է հայերի՝ որպես գաղթականի տարբերակիչ գիծը. ուրիշների օրենքներն ընդունել հնարավորինս արագ և հարմարվել դրանց՝ ապրելով այդ օրենքներով, չդադարելով հայ լինելուց»<sup>9</sup>:

Աղապատացիայի գործընթացի մեջ գլխավոր դեր է խաղում նաև գաղթականի անձնական երջանկությունը, որը կարող է հեշտացնել (կամ դժվարացնել) այդ գործընթացը:

<sup>7</sup> Տե՛ս Կ. Վաղդուվսկա, էջ 35:

<sup>8</sup> Արամ, հայ, 23 տարեկան, Վարշավա, առևտրական:

<sup>9</sup> Դոմինիկա, լեհուհի, 26 տարեկան, Երևան, ուսուցչուհի:

Լեհաստան եկող օտարերկրացիները պետք է «վերածրագրավորվեն» լեհական իրականությանը համապատասխան: Ոչ միշտ են այդ փոփոխությունները հանգիստ բնույթ կրում: Լինում են դեպքեր, երբ վերադառնալով Հայաստան կամ հանգստանալու նպատակով մեկնելով այլ վայր՝ հայ ամուսինը լեհ կնոջից պահանջում է, որ նա իրեն պահի հայուհու պես, մասնավորապես հասարակական վայրերում կամ հարազատների ու հին ընկերների շրջանում:

### ***Քիզնեսի հանդես վերաբերմունքը***

Երրորդ ռազմավարությունը, որը հեշտացնում է հասարակության մեջ աղայատացիայի գործընթացը (առևտուր անող հայերի դեպքում), քիզնեսի նկատմամբ հայերի յուրահատուկ մոտեցումն է, որի մեջ մտնում են առևտուր անելու ձևերը, շուկայում կապեր ստեղծելու հմտությունը, տեղական գնորդների պահանջներին հարմարվելու կարողությունը, նաև այն, որ նրանք աշխատում են լեհ վաճառականների հետ չմրցակցել (թեպետ դա չի նշանակում, թե հայերին չեն ընդունում որպես մրցակից):

Հայերը հիմնականում զբաղվում են մանրածախ ապրանքների՝ ժամացույցներ, հեռադիտակներ, դանակներ, կրակվառիչներ, էլեկտրոնային ապրանքներ, առևտրով: Նրանք բնակվում են ոչ մեծ քաղաքներում (ի տարբերություն առաջին և երկրորդ ալիքի հայերի), և նաև այնտեղ, որտեղ տվյալ ապրանքի պահանջարկը կա, որտեղ կյանքը ավելի էժան է, իսկ հարևանային կապերը ավելի ամուր: Միջին մեծության գրեթե յուրաքանչյուր քաղաքում կարելի է առնվազն մի քանի հայկական ընտանիքի հանդիպել:

Նախկինում նրանք զբաղվում էին Խորհրդային Միությունում արտադրված ապրանքների (անօրինական արտադրության ձայնա- և տեսասկավառակներ և ալկոհոլ) վաճառքով: Այժմ նրանք ապրանք են գնում վիետնամցիներից (օրինակ՝ էժանագին հագուստ) կամ բելառուսներից (հիմնականում ալկոհոլ և ծխախոտ): Ոմանք ունեն սեփական վրանները, մյուսները առևտուր են անում հենց փողոցում, չնայած այն բանին, որ ոստիկանությունը հաճախ արգելում է դա:

Գնորդները նրանց համարում են աշխատասեր, սիրում են նրանցից ապրանք գնել, քանի որ գները ցածր են, և լեհերի հետ համեմատած՝ հայերը ընդառաջ են գնում սակարկելու նրանց ցանկությանը:

Այլ կարծիք ունեն այն լեհերը, որոնք հայերի հետ միասին նույն շուկայում առևտուր են անում: Հայերի մասին նրանց բնութագրումները կարող են գնահատվել և՛ դրական, և՛ բացասական՝ գրույցի ենթատեքստից ելնելով: Եթե հայերը լեհ վաճառականների կողմից բնութագրվում էին որպես մրցակից, ապա նշվում էր նրանց բռնկվող, վիճաբանությունների և կռիվների հակված բնավորությունը: Իսկ երբ հայերը ներկայացվում էին որպես անօրինական շուկաները փակել ցանկացող ոստիկանության դեմ լեհ վաճառականների հետ միասին պայքարող հասարակություն, ապա մատնանշվում էր նրանց խորամանկությունը և ոստիկանության հետ լեզու գտնելու կարողությունը:

Լեհերը ուշադրություն են դարձնում այն փաստին, որ հայերը իրար աջակցում են, կազմակերպված են, կապեր ունեն այն լեհերի հետ, որոնք իրենց հնարավորություն են տալիս համեմատաբար էժան ապրանք գտնելու: Ավելին, քանի որ նրանք Լեհաստանում ապրում են ապօրինի և հարկեր չեն մուծում, այդ պատճառով կարող են ավելի էժան վաճառել իրենց ապրանքը: «Ես գիտեմ, որ նրանք իրար աջակցում են, համախմբված են. հաստատ գիտեմ դա: Եթե ինչ-որ մութ հարցեր կան, ապա նրանք իրար միջև կարող են լուծել, այնպես որ ստեղծվում են ոչ ֆոր-

մալ կառույցներ, ձեռքը ձեռք է լվանում և այդպես շարունակ, դե հասկանում ես...Եվ քանի որ նրանց գործարքների մեծ մասը մութ է, ապա նրանք իսկապես շատ բան կարող են անել»<sup>10</sup>:

Սա կարևորվում էր հատկապես 90-ական թվականներին, երբ ավելի փորձառու և ձեռներեց հայերը վախ էին ներշնչում լեի վաճառականներին՝ առանձին դեպքերում տեղիք տալով վիճաբանությունների:

Այժմ հայերը հազվադեպ են վեճի բռնվում տեղացի վաճառականների հետ, և վերջիններիս համար հայերն այլևս մրցակից չեն: Սակայն միշտ այդպես չի եղել: Օրինակ բերելու համար ներկայացնենք Գիժիցկո քաղաքում տեղի ունեցած մի դեպք և տեսնենք, թե այն ինչ ազդեցություն է ունեցել հայերի ադապտացիայի և լեի վաճառականների հետ հարաբերության կարգավորման գործում:

Գիժիցկոյում (այն գտնվում է Լեհաստանի հարավ-արևելքում) 90-ական թվականներին լեի վաճառականները, մրցակցությունից վախենալով, ցանկացան ազատվել հայ վաճառականների մի խմբից: Երկու կողմից սպառնալիքներ էին լսվում, կազմակերպվում ծեծկռտուքներ՝ օրըստօրե մոտենալով վտանգավոր բախման: Արդյունքը եղավ այն, որ հայերը կարողացան անօրինական ճանապարհներով հաստատվել շուկայի ամենալավ տեղերում: Նրանք իրար աջակցում էին, օգտագործում իրենց բոլոր, այդ թվում նաև այսպես կոչված «մաֆիայի» հետ ունեցած կապերը, որպեսզի մնան շուկայում: Լեիներն իրենց հերթին ցանկանում էին օրինական միջոցներով ազատվել նրանցից, ուստի դիմեցին դատարան՝ դատական ատյաններին տեղյակ պահելով հայերի անօրինական ապրելու մասին: Հետևանքը եղավ այն, որ հանցագործ տարրերի հետ կապեր ունեցողներին արտաքսեցին երկրից, իսկ մյուսները մինչև այժմ էլ աշխատում են այնտեղ: Կոնֆլիկտը պարտադրեց նրանց օրինականացնելու իրենց փաստաթղթերը կամ որոշում կայացնելու վերադարձի մասին: Նրանք, ովքեր որոշեցին մշտապես մնալ Լեհաստանում (այլ ոչ թե Լեհաստանը ընդունել միայն որպես տարանցիկ երկիր), բարելավեցին իրենց կապերը լեի վաճառականների հետ, ժամանակի ընթացքում սովորեցին լեիներեն, իսկ լեիները սկսեցին նրանց ուրիշ կերպ վերաբերվել:

Այժմ միայն ավագ սերունդն է, որ հիշելով նախնիներում տեղի ունեցած դեպքերն ու անկարգությունները՝ շարունակում է հայերին վերաբերվել զգուշությամբ, մինչդեռ երիտասարդները բավականին անտարբեր են հայերի նկատմամբ. նրանք հայերին ընդունում են ո՛չ որպես թշնամի, ո՛չ էլ որպես մրցակից: Դրանում, ինչպես պարզվեց հայերի պատասխաններից, դեր է խաղացել այն հանգամանքը, որ նախնիներում անընդհատ անկարգություններ անողները կամ ինքնական վերադարձել են, կամ նրանց ստիպողաբար երկրից հեռացրել են հայ ազգի պատիվը կարևորող հայերը: «Նորերը կամ պիտի ընդունեն խաղի կանոնները, կամ մենք նրանց ստիպում ենք հեռանալ»<sup>11</sup>, - ասում էին նրանք:

Ջբաղվելով սեփական բիզնեսով՝ հայերը շուտով հասկացան, որ միայն ռուսերենի իմացությունը Լեհաստանում բավական չէ, որովհետև համոզվեցին, որ օգտագործելով այդ լեզուն, արժանանում են (ինչպես և մյուս կովկասցիները) տհաճ վերաբերմունքի: Դա նախ և առաջ հետևանք էր արևելքից եկածների հանդեպ լեիների շրջանում ձևավորված կարծրատիպերի՝ լեիները նրանց բոլորին «ռուս» էին անվանում և հաճախ նույնացնում ռուսական մաֆիայի հետ:

Շուկայի աշխատանքը սովորաբար նորեկ հայերին հնարավորություն է տալիս ապրել հիմնականում միջին ապրելակերպով, որը նույնպես նպաստում է

<sup>10</sup> Արեգ, 23 տարեկան, ինֆորմատիկ:

<sup>11</sup> Զ. Գիժիցկո, 54 տարեկան, առևտրական:

ադապտացիային, որովհետև նրանք դառնում են ավելի ինքնավստահ, կարողանում են հարմարվել իրենց շրջապատող իրականությանը: Այսուհանդերձ նորեկ հայերից քչերն են կարողանում վեր բարձրանալ և ծավալել տնտեսական լայն գործունեություն: Օրինակ՝ նրանցից մեկը արդեն ունի կոսմետիկայի ֆաբրիկա, հաջողությամբ գործող մի քանի ռեստորան և հասարակական սննդի այլ կետեր<sup>12</sup>: Հաստատանից գաղթածները իրենց հույսը դնում են հիմնականում իրենց վրա, այլ ոչ թե պետության: Այդ պատճառով հայերը լեհերի կողմից ընդունվում են որպես «որևէ խնդիր չունեցող», կուլտուրական մարդիկ, որոնք կարողանում են գտնել իրենց տեղը լեհական իրականության մեջ:

Այսպիսով, ամփոփելով վերը ասվածը, կարող ենք եզրակացնել, որ եթե նշված գործոնները նպաստում են Լեհաստանում ապրող հայերի համեմատաբար հեշտ հարմարվելուն կենցաղային մակարդակում, ապա նույնը չենք կարող ասել հասարակության վերին ոլորտների համար: Պատճառն այն է, որ նրանց մեծ մասն առայժմ չի դարձել երկրի օրինական բնակիչ ու քաղաքացի: Ադապտացման գործընթացը, լինելով բարդ ու երկարատև, կարող է դեռ երկար տևել: Անկախ այն բանից, թե ինչպիսին է հայերի կարգավիճակը Լեհաստանում, բոլոր դեպքերում Հաստատանից ներգաղթածները իրենց հույսը դնում սեփական ուժերի և ոչ թե պետության վրա, կարողանում են ընդհանուր առմամբ հաղթահարել իրենց առջև ծառայող դժվարությունները և ընդգրկվել լեհական հասարակության մեջ:

**ИВОНА КАЛИШЕВСКА** (Варшава) — *Стратегия адаптации армян в Польше.* — В деле адаптации армян в Польше автор придает наиболее важное значение трем факторам: а) поддержка со стороны издавна сложившейся общины; б) браки с поляками (также и неофициальные); в) особая стратегия в торговле, в частности по отношению к новоприбывшим армянам. Последние, как считает автор, сравнительно легче приспосабливаются в быту и справляются с возникающими перед ними трудностями.

---

<sup>12</sup> Տե՛ս **S. Մարճինիակ**, Հայկական կոնսուպցիոնիզմը, <http://www.centrum-armenia.umk.pl/libs/konsumpcjonizm.pdf>: